

Պաստերեյրոգ

Հիվանդության բնորոշումը. Պաստերեյրոգը ընտանի (ԽԵԿ, ՄԵԿ, թռչուններ և այլն) ու վայրի մի շարք կենդանիների, թռչունների վարակիչ հիվանդություն է, որի սուր ընթացքը բնորոշ է շճային (ներքին օրգանների արտաքին թաղանթը) և լորձաթաղանթների բազմաթիվ արյունազեղումներով, սեպտիցեմիայի (արյան վարակման) նշաններով, իսկ խրոնիկը՝ առավելապես թոքերի ախտահարումներով:

Հարուցիչը Pasteurella multocida մանրէն է:

Մանրէները օժտված են ցածր կայունությամբ.

- գոմաղբում, արյան մեջ, սառը ջրում պաստերելաները կենսունակ են մնում 2-3 շաբաթ,
- դիակում՝ մինչև 4 ամիս:

Հիվանդության տարածման ուղիները. Քանի որ մանրէն արտաքին միջավայրում շուտ է ոչնչանում, հարուցիչի հիմնական աղբյուրը հիվանդ և հիվանդացած առողջացած կենդանիներն են (այսինքն՝ առողջանալուց հետո կենդանին մնում է վարակակիր):

Մանրէները հիվանդ և հիվանդացած առողջացած կենդանիներից արտազատվում են.

- քթից արտահոսքի,
- արտաշնչվող օդի,
- թքի,
- կղանքի,
- կաթի միջոցով:

Հիվանդության նկատմամբ ավելի զգայունակ են մատղաշները: Դրսևորվում է էնզոտիայի ձևով, այսինքն՝ հիվանդանում է կենդանիների մեծ մասը: Պաստերեյրոգը արձանագրվում է առավելապես գարնանը և աշնանը:

Վարակումը տեղի է ունենում.

- ներքին (կերի, ջրի միջոցով),
- ակրոզեն (օդակաթիլային) ճանապարհով:

Հիվանդանում են նաև մարդիկ՝ վարակված կաթի, կաթնամթերքների և մսի միջոցով (տես աղյուսակ 3):

Կլինիկական նշանները. Գաղտնի շրջանը տևում է մի քանի ժամից մինչև 5 օր: Ընթանում է գերսուր, սուր, ենթասուր և խրոնիկ ձևով:

Սուր ընթացքի դեպքում.

- բարձրանում է ջերմությունը 40°C և ավելի,
- ընկճվածություն, կերի ընդունման բացակայություն,
- քթաշրթունքային հայելին դառնում է սառը և չոր,

- դադարում է որոճը և կաթնատվությունը,
- հաճախ արյունահոսություն քթից,
- ախտահարվում են թոքերը, ի հայտ են գալիս դրան բնորոշ նշաններ,
- մեզը արյունային է, զարգանում է սեպտիցեմիա՝ արյան վարակում, և 1-2 օրում կենդանին սատկում է:

Կանխարգելումը և պայքարի միջոցառումները. ՀՀ-ում պաստերեյոզի կանխարգելման համար վակցինացումը իրականացվում է պետպատվերի շրջանակներում:

Եթե, այնուամենայնիվ, ձեր տնտեսությունում հիվանդության բռնկման դեպք է առձանագրվել կամ կասկած կա, անմիջապես դիմեք անասնաբույժին, որի հսկողությամբ պետք է իրականացվեն հիվանդության հետագա տարածումը կանխող, և հիվանդ կենդանիների բուժման միջոցառումները (տես աղյուսակ 4):

Պաստերեյոզի դեպքում.

- Սպանդի ենթարկած կենդանիների միսը կարելի է օգտագործել միայն ջերմային մշակումից հետո:
- Հիվանդ կենդանիների կաթը կարելի է օգտագործել միայն ջերմային մշակումից հետո:
- Դիակները պետք է գցել բեկարի հորը կամ այրել:

Բուժման համար օգտագործում են հակապաստերեյոզային գերիմուն շիճուկ, տետրացիկլինային խմբի հակաբիոտիկներ և սուլֆանիլամիդներ: Լավ է անցկացնել նաև նշանային բուժում: